ՁՈՐԱՑ ԵԿԵՂԵՑԻ
ՁՈՐԱՎԱՐԻ ԱՊԱՄԱՓԱՐԸ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ



ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ - 2010

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
ՀՀ ՁՈՒ ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ
Տ. ՎՐԹԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

«Դու մի՛ վախեցիր, քանզի ես քեզ հետ եմ, մի՛ խաբվիր, քանզի ես եմ քո Աստվածը, ես, որ զորացրի քեզ ու պահպանեցի քեզ իմ արդար աջով»:

(Եսայի ԽԱ 10)

Սիրելի՛ հայ քաջամարտիկ զինվոր, սույն աղոթագիրքը ձեռնամուխ եղանք պատարաստելու՝ ի հոգևոր արթնություն և ի շինություն հայոց հաղթական բանակի յուրաքանչյուր ազնիվ, քաջ և աննահանջ զինվորի: Մեր աղոթքն ու սրտագին մաղթաքն է, որ Երկնային Տերը լինի մեր հայրենյաց խրոխտ բանակի և համայն ժողովրդի մշտական և միակ Առաջնորդը, վասն խաղաղության մեր երկրի, այլև հավերժ անսասանության մեր սահմանների, ինչպես նաև ի պայծառություն մեր հավատավոր ժողովրդի. ամեն:

ՏԵՐ ՎՐԹԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՀՀ ԶՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ

ԱՂՈԹՔԻ ՄԱՍԻՆ

«Հոգի է Աստված»՝ սովորեցրեց մեզ Քրիստոս (Հովհ. Դ 24): Եվ անտեսանելի Հոգի Աստծո հետ մարդ արարածը կարող է հաղորդակցվել աղոթքով, քանզի Արարչի հետ հաղորդակցության միջոցն է աղոթքը, որով մեր անմահ հոգիները կապվում են կյանքի աղբյուրի՝ Աստծո հետ: Սուրբ Գրքում գրված է. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե հավատ ունենաք և չերկմտեք… թեկուզ և այդ լեռանն ասեք՝ ելի՛ր ու ծովն ընկիր, այն կկատարվի: Եվ ամեն ինչ, որ աղոթքի մեջ ուզեք հավատով՝ կստանաք» (Մատթ. ԻԱ 21-22):

Աղոթելու երեք կերպ կա՝ խոսքով, մտովի և ի սրտե: Վերջին երկուսը կոչվում են ներքին աղոթք: Դրանցից լավագույնը ի սրտե, այսինքն՝ սրտի խորքից բխած աղոթքներն են, քանզի Աստծուն ավելի հետաքրքրում է մեր սիրտը, քան մեր խոսքը:

Աղոթքը այն վահանն է, որով քրիստոնյան պաշտպանվում է չարից և փրկության է

առաջնորդվում:

Աղոթքը կյանք է և հոգևոր սնունդ: Ճաշակեցեք և տեսեք, որ իսկապես քաղցր է…:

†

Աղոթքն ամրության պարիսպ է, հաստատության սյուն, հավատքի հիմք, հուսո խարիսխ, առ Աստված ելնելու սանդուղք: Աղոթքը պարծանքների պսակ է, փրկության պատճառ, բարիքների առիթ, համբերության մարզիչ, աստվածպաշտության ծանոթություն, Սուրբ Հոգուն հրավիրող և բանսարկուին կործանող: Եվ քանի որ սատանան գիտի, որ մարդն աղոթելիս շնորհ է ստանում Աստծուց, ուստի ջանում է աղոթքի ժամին ցնորել մարդկանց մտքերը, որպեսզի զրկի այն շնորհներից, որոնք նրանք ստանում են մաքուր մտքով աղոթելիս:

Ուստի մենք, իմանալով այս, նրան հակառակ հանապազ ջանանք անզբաղ մնալ աղոթքում: Եվ այն ժամին մեր սրտերը մաքրենք չարի բոլոր արկածներից և միշտ աղոթենք առանց բարկության և երկմտու-

թյան:

Եվ հատկապես աղոթքի ժամին մեր հոգիներում ընդունենք Քրիստոսի սիրո հուրը՝ հարատև պաղատանքներով արթուն լինելով Նրա առջև, առօրյա հոգսերը թեթև համարելով՝ հանուն մշտնջենավոր բարիքների վայելքի:

Պարտավոր ենք միմյանց համար աղոթել, օգնել և փրկել միմյանց մարմնավոր և հոգևոր վտանգներից: Քանի որ եթե մարտընկերներն զգուշանում են ոչ միայն [սեփական] անձի, այլև ընկերոջ համար և մեռնում նաև ուրիշների համար, ո՛րչափ առավել ևս մենք ենք պարտավոր հոգևոր պատերազմում աղոթքներով և բազում բարեխոսություններով միմյանց օգնական լինել, ինչպես ուսուցանում է Սուրբ Գիրքը. «Միմյանց համար աղոթեցե՛ք, որպեսզի բժշկվեք. քանզի արդարի աղոթքը խիստ զորավոր է օգնելու համար»:

Խոսրով Անձևացի

Սուրբ Հայրերն աղոթքը նմանեցնում են

երկնքից երկիր կախված ոսկե շղթայի, որն աղոթասերները, ջանալով ձեռքով դեպի ի-րենց քաշել, հոգով երկինք են ելնում:

Շատ անգամ Աստված, մեր խնդրանքը չկատարելով, առավել է ողորմում, քան կա-տարելով: Քանզի երբ անգիտությամբ որևէ վնասակար բան ենք խնդրում՝ կարծելով, թե լավ բան է, Աստված չտալով՝ մեծ ողոր-մություն է մեզ անում: Ուստի վայել չէ տրտմել ու Աստծուց տրտնջալ, թե մեր խնդրանքը չկատարեց, այլ պետք է ուրախ սրտով ապավինենք Աստծո կամքին, որ ա-նի այնպես, ինչպես կամենում է: Քանզի միշտ մեր օգուտն է կամենում ու Իր բարե-րարությամբ այն տալիս:

Աստված երբեմն ուշացնում է տալ մարդկանց խնդրածը, որպեսզի պարգևնե-րի հարգը լավ իմանան և ինչ որ առնում են, չկորցնեն, քանզի մարդիկ սովոր են անաշ-խատ ստացած բարիքներն անհոգությամբ կորցնել: Երբեմն էլ ուշացնում է, որպեսզի խնդրողներին առավել արիացնի աղոթքի ջանքերի մեջ և գերագույն պարգևների ար-ժանացնի: Իսկ երբեմն արագորեն շնորհում

է, որպեսզի անհամբերության պատճառով վիատվելով՝ չհուսալքվեն:

Պողոս պատրիարք Ադրիանապոլսեցի

Հաճա՛խ աղոթեցեք, քանզի աղոթքներն են, որ մարդկանց բարձրացնում են առ Աստված և Աստծուն խոնարհեցնում դեպի մարդիկ:

Սբ. Ներսես Շնորհալի

Աղոթքն առավել հարազատ և մերձավոր է Աստծուն, քան ամեն մի առաքինություն, քանզի բոլոր մյուսները որպես հանդերձանք և պատրաստություն են Աստծո մոտ մուտք գործելու համար, իսկ սա դեմ հանդիման խոսակցություն է Աստծո հետ: Քանզի ինչպես որ երկրագործի ողջ աշխատությունը պտուղները հավաքելու համար է, իսկ խոհարարինը՝ կերակրելու, այնպես էլ ամեն մի բարեգործություն, զգաստութ-

յուն և պարկեշտություն մտքի ճանապարհը հարթելու համար է, [որպեսզի] անզբաղապես Աստծո հետ, ինչպես սիրելի բարեկամի, աղոթքով զրուցի և անձի ու աշխարհի բոլոր մարմնավոր և հոգևոր կարիքները (Նրա) առաջ դնի, Նրանից հայցի բոլոր բարիքների հաջողում և փրկություն թշնամու որոգայթից…

Պետք է ամբողջ սրտով ներել պարտապաններին և սիրով աղոթել նրանց համար, այսպես մեզ Աստված իշխանություն տվեց մեր մեղքերի թողության համար, քանզի ինչ սրտով թողնում ենք նրանց պարտքերը և սեր ու գութ ցուցաբերում նրանց հանդեպ, նույն չափով էլ Աստված մեր հանցանքներն է թողնում և Իր արարչական սերն ու գթությունը սփռում մեզ վրա:

Սբ. Գրիգոր Նարեկացի

ԱՄԵՆՕՐՅԱ ԱՂՈԹՔՆԵՐ

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

Հա՛յր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո, եկեսցէ արքայութիւն Քո, եղիցին կամք Քո, որպէս յերկինս եւ յերկրի:

Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց:

Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն, զի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

ՆՈՐԱԿՈՉԻԿԻ ԱՂՈԹՔ

Ամենակարող Տե՛ր, Քո Աստվածային զորությամբ ամրացրու ինձ, լցրու իմ սուրբ հայրենյաց քաջ պաշտպանը լինելու վճռականությամբ: Քո հոգևոր սպառազինությամբ դարձրու ինձ ավելի համարձակ, կարգապահ ու ընկերասեր: Երկնային Զորքիդ բարեխոսությամբ միշտ տոկուն պահիր զինակիցներիս, պետերիս ու ինձ. ամեն:

ԱՂՈԹՔ ԳՈՐԾԻՑ ԱՌԱՋ

Մեր ձեռքերի գործերն ուղղի՛ր, Տե՛ր, և մեր ձեռքերի գործերը հաջողեցրո՛ւ. ամեն:

ԱՂՈԹՔ ճԱՇԻՑ ԱՌԱՋ

Խաղաղությամբ ճաշակենք այս կերակուրները, որոնք մեզ համար պատրաստված են Տիրոջ կողմից. օրհնյալ է Տերն Իր պարգևներով. ամեն:

ԱՂՈԹՔ ՃԱՇԻՑ ՀԵՏՈ

Փառք տիեզերքի Կերակրողին, որ մեզ կերակրեց և լիացրեց, և Նրան փառք հավիտյանս հավիտենից. ամեն:

ԱՂՈԹՔ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎ ԴԱՍԵՐ ՍԵՐՏԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Հոր իմաստությու՛ն Հիսուս, տու՛ր ինձ իմաստություն՝ ամեն ժամ Քո առջև բարին խորհելու, խոսելու և գործելու, և փրկի՛ր ինձ չար խորհուրդներից, խոսքերից և գործերից. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

ԱՂՈԹՔ ՃԱՆԱՊԱՐՀ ԳՆԱԼՈՒՑ ԱՌԱՋ

Տե՛ր, ուղղի՛ր մեր ընթացքը խաղաղության ճանապարհներով: Տե՛ր, ուղղի՛ր և առաջնորդի՛ր մեր և բոլոր հավատացյալների հոգիները՝ գնալու

արդարության ճանապարհով և ընթանալու դեպի հավիտենական կյանք. ամեն:

ԿՐՏՍԵՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԱՂՈԹՔ

Ամենազոր Տե՛ր, Իմ սուրբ հայրենյաց երկնայի՛ն պաշտպան, առաջնորդիր ինձ, որպեսզի ես էլ կարողանամ իմ կրտսեր եղբայրներին հայրենանվիրության օրինակ լինել՝ նրանց զինվորական կրթության և դաստիարակության համար: Օգնիր ինձ անսայթաք ճանապարհով առաջնորդելու իմ եղբայրներին՝ մեր սուրբ հայրենիքի պաշտպանության նվիրական գործում: Փառք Քեզ Հոր և Սուրբ Հոգու հետ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՄԱՐՏԱԿԱՆ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Սիրում եմ քեզ, Տե՛ր, զորությու՛ն իմ. ո՛վ Տեր, պահպանի՛չ իմ, ապավե՛ն իմ և Փրկի՛չ: Աստված օգնականս է, ես հույսս դրել եմ Նրա վրա. իմ ապավենն է, փրկութ-

յանս եղջյուրը, ինձ ընդունողը: Օրհնելով կկանչեմ Տիրոջը և իմ թշնամիներից կազատվեմ *(Սաղմոս ԺԷ 2-4)*: Փառք Քեզ Հոր և Սուրբ Հոգու հետ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՄԱՐՏԱԿԱՆ ՀԵՐԹԱՓՈԽԻ ԺԱՄԱՆԱԿ

Չեմ սոսկա ես նրանց բյուրավոր զորքերից, որոնք ամեն կողմից պատել ու պաշարել էին ինձ: Արի՛, Տե՛ր, փրկի՛ր ինձ, Աստվա՛ծ իմ, քանզի կործանեցիր բոլորին, ովքեր իզուր թշնամացել էին ինձ հետ. Դու մեղավորների ատամները կփշրես: Տիրոջից է փրկությունը, Քո օրհնությունը ժողովրդիդ վրա թող լինի *(Սաղմոս Գ 7-9)*: Փառք Ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՄԱՐՏԱԿԱՆ ՀԵՐԹԱՓՈԽԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԻՆ

Թող ուրախանան բոլոր նրանք, ովքեր հույս են դնում Քեզ վրա, հավիտյան թող ցնծան, և Դու ապրես նրանց մեջ. թող պարծենան Քեզնով Քո անունը սիրողները, քանզի Դու պիտի օրհնես արդարին. Տե՛ր, Քո սպառազինությամբ պաշտպանեցիր մեզ:

(Սաղմոս Ե 12-13)

Այսուհետև մենք խաղաղությամբ կննջենք ու կարթնանանք, քանզի Դու միայն, Տե՛ր, ապահովության մեջ բնակեցրիր մեզ *(Սաղմոս Դ 9-10)*: Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ

Ամենակարող Տե՛ր, առաջնորդիր ինձ և իմ ընկերներին այս ծառայության մեջ, մի՛ թող, որ թերանանք մեր ծառայողական պարտականությունների կատարման մեջ, օգնիր, որպեսզի այն անցկացնենք զգոնությամբ, աչալրջությամբ՝ համաձայն

հրահանգների և առանց արտակարգ պատահարների, քանզի Քեզ համար անկարելի ոչինչ չկա: Եվ Քեզ Հոր և Սուրբ Հոգուդ հետ փառք այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Փառք Քեզ, մեր Երկնային Ապավեն, որ շնորհեցիր մեզ, Քեզ ապավինելով, խաղաղությամբ և առանց արտակարգ պատահարների անցկացնել մեր այս ծառայությունը: Հետ այսու էլ մի՛ թող, որ տկարանանք մեր մյուս պարտականությունների կատարման մեջ ևս: Եվ Քեզ փառք Հոր և Սուրբ Հոգու հետ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՀԱՏՈՒԿ ՄԱՐՏԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻՑ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ

Ընդարձակեցիր ուղիս իմ ոտքերի տակ, և ընթացքն իմ չտկարացավ: Հալածելով թշնամիներիս՝ ես կհասնեմ նրանց ու ետ

չեմ դառնա, մինչև չհաղթեմ նրանց: Ես կընկճեմ նրանց, որ այլևս չկարողանան կանգնել, և նրանք կընկնեն իմ ոտքերի տակ: Դու ինձ պատերազմելու զորություն տվիր, դեմս ելնողներին ոտքերիս տակ գցեցիր:

Թշնամիներիս դու հալածեցիր, իսկ ինձ ատողներին ոչնչացրեցիր *(Սաղմոս ժէ. 37-41)*: Փառք Ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԶԵՆՔ-ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ՀԵՏ ՎԱՐՎԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Քրիստոս Աստված մեր, պահպանիր և առաջնորդիր մեզ այս վարժանքի և մեր ողջ ծառայության ժամանակ: Մեզ իմաստություն և զգոնություն տուր, որպեսզի մեր անզգուշությամբ և անփութությամբ չար պատահարի պատճառ չդառնանք: Փառք Քեզ Հոր և Սուրբ Հոգու հետ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՊԱՏԻԺ ԿՐՈՂ ԵՎ ԿԱՐԳԱԶԱՆՑ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ՊԱՏԺԱԽՑՈՒՄ)

Ողորմի՛ր ինձ, Աստվա՛ծ, Քո մեծ ողորմությամբ և Քո գթառատությամբ ջնջի՛ր իմ հանցանքները: Առավել ևս լվա՛ ինձ իմ անօրենությունից և իմ մեղքերից մաքրի՛ր ինձ: Իմ անօրենություններն ես ինքս գիտեմ, և մեղքերն իմ միշտ առջևս են: Իմ մեջ մաքուր սիրտ հաստատի՛ր, Աստված, և արդար հոգի նորոգի՛ր իմ որովայնում *(Սաղմոս Ծ 3-5, 12)*: Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՔՆՆՉԱԿԱՆ ՄԵԿՈՒՍԱՐԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երանի նրան, ում մեղքերին թողություն տրվեց և ում բոլոր հանցանքները ծածկվեցին: Երանի այն մարդուն, որին Տերն այլևս մեղավոր չի համարում, և որի բերանում նենգություն չկա: Ես լռեցի, և իմ բոլոր ոս-

կորները մաշվեցին՝ ամեն օր գիշեր-ցերեկ Տիրոջը կանչելուց: Քո ձեռքը ծանրացավ ինձ վրա. ես կրկին ընկա թշվառության մեջ, քանզի փշերն ինձ ծակեցին: Մեղքերս քեզ ցույց կտամ և անօրենությունս չեմ ծածկի Քեզնից: Ասացի, թե կխոստովանեմ մեղքերն իմ, և Դու թողություն կտաս իմ մեղքերի ամբողջ ամբարշտությանը *(Սաղմոս ԼԱ 1-5)*: Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԹՈՒԼՈՒԹՅԱՆ, ՏԿԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Բժշկական ճարտարության ամենափորձ հնարամտությամբ՝ անախտական կյանքի՛ պատճառ, զորավոր Թագավո՛ր երկնավոր, Տե՛ր Հիսուս Քրիստոս, Աստվա՛ծ բոլորի՝ իմանալիների և տեսանելիների, ահա՛ Դու իմ մեջ ես, ըստ մարգարեի խոսքի, նոր կցորդությամբ, որպեսզի Քեզ հետ միության այս բարեզարդ դաշինքով լուսավորվեմ կրկին՝ ողջացած հոգով և

մարմնով, ըստ ամենայնի կարող և անհաղթ:

Սբ. Գրիգոր Նարեկացի

ԲՈՒԺԿԵՏՈՒՄ ԵՎ ՀՈՍՊԻՏԱԼՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՁԻՆՎՈՐԻ ՀԱՄԱՐ

Որդի՛ կենդանի Աստուծո, օրհնյա՛լ ամեն ինչում, ահավոր Հորդ անքնի՛ն ծնունդ, Քեզ համար չկա ոչինչ անհնար: Քո ողորմության փառքի անստվեր շողի ծագումից հալչում են մեղքերը, հալածվում են դևերը, ջնջվում են հանցանքները, խզվում են կապանքները, խորտակվում են շղթաները, կենդանանում են մահացածները, բժշկվում են հարվածները, առողջանում են վերքերը, վերանում են ապականությունները, տեղի են տալիս տխրությունները, նահանջում են հեծությունները, փախչում է խավարը, պարզվում է մեգը, ցրվում է մառախուղը, փարատվում է մռայլը, սպառվում է աղջամուղջը, վերանում է մութը, հեռանում է գիշերը, տարագրվում է տագնապը, չքանում է չարիքը, հալածվում են հուսահատություն-

ները, և թագավորում է Քո ձեռքն ամենակալ, քավի՛չդ ամենայնի:

Սբ. Գրիգոր Նարեկացի

ՎԻՐԱՎՈՐՎԵԼՈՒ ԵՎ ԿՈՏՐՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Տե՛ր, զայրույթով Քո մի՛ հանդիմանիր ինձ և Քո բարկությամբ ինձ մի՛ խրատիր:

Ողորմի՛ր ինձ, Տե՛ր, քանզի հիվանդ եմ ես, բժշկի՛ր ինձ, քանզի ոսկորներս խախտվել են *(Սաղմոս Զ 2-3)*: Փառք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԲՈՒԺՕԱՌԱՅՈՂԻ (ՍԱՆՀՐԱՀԱՆԳԻՉԻ) ԱՂՈԹՔ

Ամենակատարյա՛լ Բժիշկ երկնային, Դու ես վերացնում բոլոր ցավերը և ամեն տեսակ վերքերը բուժում: Խնդրում եմ Քեզ, Տե՛ր, Դու հեռու պահիր հիվանդություններից ու ցավերից բոլոր զինվորներին Հայոց բանակի: Իսկ ինձ, որ ընտրել ես բուժակի

արվեստին տիրապետելու, իմաստությու՛ն տուր օգտակար լինելու հայ զինվորների ցավերի դարմանման գործում, որ չթերանամ իմ ծառայության մեջ և միշտ փառաբանեմ Ամենասուրբ Երրորդությանդ՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից ամեն:

ՎԱԽԵՐ, ՏԱՐԱԿՈՒՅՍՆԵՐ

Տերն իմ լույսն է ու կյանքը, ու՞մից վախենամ. Տերն իմ կյանքի ապավենն է, ու՞մից ես դողամ: Երբ չարագործ նեղիչներս ու թշնամիներս մոտեցան ինձ՝ մարմինս ուտելու, նրանք թուլացան ու ընկան: Եթե իմ դեմ պատերազմ պատրաստվի, սիրտս չի սոսկա. եթե իմ դեմ ճակատամարտի ելնեն, միևնույն է, Տե՛ր, հույսս Քեզ վրա եմ դնելու: Իմ օգնականն եղիր, Տե՛ր, և մի՛ անարգիր ինձ ու մի՛ լքիր, փրկիչ Աստվա՛ծ իմ *(Սաղմոս ԻՀ 1-3.9)*: Փառք Քեզ Ամենասուրբ Երրորդություն՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀԵՐԻՆ

Երբ ձայն տվի, իմ արդարության համար լսեցիր ինձ, Աստվա՛ծ, նեղության մեջ ինձ անդորր տվիր. ողորմի՛ր ինձ և ակա՛նջ դիր իմ աղոթքին *(Սաղմոս Դ 2)*: Տվիր ինձ նաև քո փրկարար պաշտպանությունը: Աջդ զորավիգ եղավ ինձ, իսկ խրատդ միշտ կանգուն պահեց. Քո խրատն իմաստուն կդարձնի ինձ *(Սաղմոս ԺԷ 36)*: Փառք Քեզ, Սուրբ Երրորդություն, Հայր, Որդի և Սուրբ Հոգի. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից.ամեն:

ԽՈՀԱՐԱՐԻ ՀԱՄԱՐ ԱՂՈԹՔ

Ամենասուրբ Տե՛ր, խնդրում ենք, օրհնիր այս կերակուրները, որ պատրաստում ենք Քեզ ապավինելով, որպեսզի զորականները ճաշակեն խաղաղությամբ ու գոհանան Քեզանից և փառավորեն Սուրբ Երրորդությանը՝ Հորը և Որդուն և Սուրբ Հո-

գուն. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ԿԱՄ ԳԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Մինչև ե՞րբ, Տեր, պիտի մոռանաս ինձ իսպառ, մինչև ե՞րբ պիտի շրջես երեսդ ինձնից: Մինչև ե՞րբ թշնամին պիտի բռնանա ինձ վրա: Նայի՛ր և լսի՛ր ինձ, Տե՛ր իմ Աստված, լու՛յս տուր, Տե՛ր, իմ աչքերին, որ երբեք մահվան քուն չմտնեմ: Թշնամիս թող չասի, թե՝ հաղթեցի նրան, կամ հալածիչներս ցնծան, եթե սասանվեմ: Ես ողորմությանդ վրա հույս դրի, Տե՛ր, սիրտս հրճվեց քո փրկագործությամբ. կօրհներգեմ քեզ, Տե՛ր բարերա՛րդ իմ *(Սաղմոս ԺԲ 1. 3-6)*: Փառք Քեզ՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԱՂՈԹՔ ԵՐԿՆԱՅԻՆ ԶՈՐՔԻՆ

Անեղ, անմահ Արարչի անմարմի՛ն սպասավորներ, վերին զորքերի դասապետութ-

յուններ՛ր: Աթոռներ՛ր, քերովբեներ՛ր և սերովբեներ՛ր, տերություններ՛ր, զորություններ՛ր և իշխանություններ՛ր, պետություններ՛ր, հրեշտակապետներ՛ր և հրեշտակներ՛ր, Միքայե՛լ և Գաբրիե՛լ, վերին զորքերի դասերի պետե՛ր, որ անլռելի ձայնով փառաբանություն եք մատուցում Ամենասուրբ Երրորդությանը և, երեքսրբյան ձայնով երգելով, ասում. «Ողորմի՛ր, Դու՛ ստեղծեցիր, կորստյան մի՛ մատնիր, Քո ձեռքի գործը մի՛ անտեսիր». օգնական և պահապա՛ն եղեք Աստծո ծառայիս. ամեն:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Տե՛ր Աստված մեր, փարատի՛ր քո ժողովրդի ցավերը և բժշկի՛ր հիվանդությունները և բոլորին կատարյալ առողջություն շնորհիր ամենահաղթ Խաչիդ նշանով, որով վերացրեցիր մարդկային ցեղի նեղությունները և դատապարտեցիր մեր կյանքի ու փրկության թշնամուն: Դու ես մեր կյանքն ու փրկությունը, բարերար և բազումողո՛րմ

Աստված, միայն Դու կարող ես թողություն տալ մեր մեղքերին և հեռացնել մեզնից ախտերն ու հիվանդությունները: Բարիք-նե՛ր պարգևող, Քո առատ ողորմությունը պարգևի՛ր արարածներիդ՝ յուրաքանչյուրին ըստ պատշաճի, որոնցից շարունակ փառաբանվում է Ամենասուրբ Երրորդությունդ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԱՂՈԹՔ ՓՈՐՁԱՆՔԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ ԵՎ ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՌԱՋ

Օրհնյալ է Քո մարդասիրությունը, Տեր իմ և Փրկիչ իմ Հիսո՛ւս Քրիստոս: Դո՛ւ ես միայն առանց մեղքի, և Քո անունն անոխակալություն և մարդասիրություն է ցույց տալիս: Գթա՛ ինձ, քանզի Դո՛ւ ես միայն մարդասեր: Փրկի՛ր ինձ՝ մեղքերի մեջ ընկածիս, քանզի Դո՛ւ ես միայն առանց մեղքի: Հանի՛ր ինձ իմ անօրենությունների տիղմից, քանզի ընկղմվեցի հավիտյանս հավիտենից: Փրկի՛ր ինձ իմ թշնամիներից, քանզի ահա առյուծի պես գոչում և մռնչում են՝ կամենալով կլանել ինձ: Արդ, Տե՛ր իմ, արձակի՛ր Քո

շանթերը և կործանի՛ր նրանց զորությունները, թող երկնչեն ու խավարեն Քո երեսից, քանզի անկար են ու չունեն զորություն՝ Քո և Քեզ սիրողների առջև կանգնելու: Տեսնում են Քո Խաչի նշանի զորությունը, Տե՛ր, և զարհուրում և ամաչելով հեռու են փախչում նրանցից, ովքեր աղոթում են Քեզ: Այժմ, Տե՛ր, պահպանի՛ր և փրկի՛ր ինձ, քանզի Քեզ ապավինեցի, նեղությունից ազատի՛ր իմ անձը, որպեսզի իսպառ կորստյան չմատնի ինձ նենգավորը, որ ծածուկ հնարներով մարտնչում է իմ դեմ: Դու, որ խորհուրդների Տերն ես և քննում ես սրտերն ու երիկամները, սրբի՛ր սիրտս և խորհուրդներս զազիր ու պիղծ խորհուրդներից, որպեսզի իսպառ չկորչեմ հավիտենական կորստով...: Եվ Քեզ Հոր և Սուրբ Հոգուդ հետ փա՜ռք հավիտյանս հավիտենից. ամեն:

Սբ. Գրիգոր Լուսավորիչ

ԱՂՈԹՔ ԸՆԴԴԵՄ ԴԵՎԵՐԻ ԵՎ ԿԱԽԱՐԴՆԵՐԻ ԿԱՊԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԸՆԴԴԵՄ ԱՂԱՆԴԱՎՈՐՆԵՐԻ

Թագավո՛ր հզոր, ապավե՛ն ծարավյալ-

ների, Փրկի՛չ նեղյալների, որ մեզ համար խոնարհվեցիր Հայրական ծոցից և մարմին առար Սուրբ Կույս Մարիամից, մեր փրկության համար մատնվեցիր, բռնվեցիր, չարչարվեցիր, խաչվեցիր, թաղվեցիր, հարություն առար մեռելներից և փառքով համբարձվեցիր առ Հայր, արթնացրո՛ւ Քո զորությունը և արի՛ ապրեցնելու, Տե՛ր, Քո Արյամբ գնվածներին, թույլ մի՛ տուր սատանային գերել Քո փրկածներին և չարին՝ բնակվելու Քո սուրբ անվան տաճարում, և Քեզ լքած մարմինն ու անդամը մի՛ թող չարի ոտնահարությանն ու ծաղրին, այլ գթա՛ արարածներիդ Քո արարչական սիրով: Տե՛ր, ողորմի՛ր մեզ, քանզի մշտապէս պարծեցանք Քո Խաչով, որը պահելով թող պահի մեզ երևելի և աներևույթ թշնամուց և պահապան լինի Աստծո ծառայիս: Եվ Քեզ Հոր և Սուրբ Հոգուդ հետ փառք հավիտյանս հավիտենից. ամեն:

ԽԱՂԱՂ ԿՅԱՆՔ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՈԹՔ

Կյանքի առաջնորդող և խաղաղություն

պարգևող մեր Աստված, Քրիստոս, Դու առաջնորդիր մեզ, որպեսզի Քո արդարության ճանապարհներով քայլենք և Քո ողորմությամբ՝ խաղաղությամբ հասնենք կյանքի և փրկության նավահանգիստը. որովհետև Դու ես մեր օգնականն ու Փրկիչը: Քեզ վայելում են փառքը, իշխանությունն ու պատիվը. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՉԱՐԻՑ ՓՐԿՎԵԼՈՒ ԶՈՐԱՎՈՐ ԱՂՈԹՔ

Սուրբ ես, ո՜վ Տեր մեր Աստված, հզոր և փառավորյալ. Դու, որ նստում ես քերովբեական կառքի վրա և լույս ես ծագեցնում արարածներիդ վրա: Լուսավորի՛ր մեզ, Տե՜ր, առավոտյան այս ժամին, որպեսզի երբ ցերեկվա լույսը ծագի, մեզ վրա ծագի նաև Քո գթությունը, ո՜վ Մարդասեր: Հեռացրու՛ մեզանից, Տե՜ր, սատանայի խաբեությունները, և բոլոր սրբերիդ աղոթքով և բարեխոսությամբ խորտակի՛ր նրա բռնությունը: Պտղաբեր դարձրու մեր

երկիրը, սնելու համար մեզ՝ Քո ծառաներին, որ միշտ փառավորում և ներ-բողում ենք Ամենասուրբ Երրորդությունդ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԱՍՏՑՈՒՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՉԵԼՈՒ ԱՂՈԹՔ

Օգնի՛ր մեզ, Տե՛ր, օգնի՛ր մեզ, ո՞վ մեր Փրկիչ Աստված, Քո մեծ անվան փառավո-րության համար. Տե՞ր, փրկի՛ր մեզ և քավի՛ր մեր մեղքերը՝ հանուն Քո Սուրբ անվան: Սուրբ և պատվական Խաչիդ հովանու տակ պարսպված և խաղաղության մեջ պահիր Քեզ ապավինող և հուսացող ժողովրդիդ: Փրկի՛ր մեզ տեսանելի և անտեսանելի թշնամիներից: Արժանի դարձրու, որ գոհությամբ փառավորենք Քեզ՝ Հոր և Սուրբ Հոգուդ հետ միասին. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՆԵՐՈՒՄ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՈԹՔ

Տե՜ր, ընդունի՛ր մեր աղաչանքները՝ Սուրբ Աստվածածնի և բոլոր սրբերի բարեխոսությամբ: Լսի՛ր մեր խնդրանքը, Տե՜ր, և ողորմի՛ր մեզ: Ների՛ր, քավի՛ր և արձակի՛ր մեր մեղքերը, և մեզ արժանի դարձրու՝ գոհությամբ փառավորելու Քեզ՝ Որդուդ և Սուրբ Հոգուդ հետ միասին. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԽԱՉԻՆ ԱՊԱՎԻՆԵԼՈՒ ԶՈՐԱՎՈՐ ԱՂՈԹՔՆԵՐ

Կյանքս միշտ Քո ձեռքերում է, Թագավո՛ր երկնավոր, ես հույսս կապել եմ Քո Սուրբ Խաչի հետ, և Քո բոլոր սրբերը բարեխոս են ինձ համար: Դու, որ փրկում ես բոլորին, մի՛ անտեսիր Քեզ ապավինածիս, այլ պահիր ու պահպանիր Քո Սուրբ Խաչի հովանու ներքո. ամեն:

Քո Խաչը թող մեզ ապավեն լինի, Տե՛ր Հիսուս, երբ որ երևաս Հոր փառքով, լուսավոր ամպերով, այն ժամանակ մենք՝ Քեզ հուսացողներս, չամաչենք, այլ Քո մեծ զորությամբ ուրախանանք Քո աջ կողմում՝ իբրև լույսի և ցերեկվա որդիներ. ամեն:

ԲԱՐԵԽՈՍԱԿԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ

Ո՞վ Սուրբ Վարդան սպարապետ, քաջ զորագլուխ Հայոց բանակի, որ հավատի զենքով զինավառ՝ ելար ընդդեմ կրակապաշտ բռնավորին, գոտեպնդի՛ր այսօր մեր մարտիկներին՝ քեզ նման արիաբար գոտեմարտելու ընդդեմ չար ոսոխի, հանուն Ազգի և հավատի. ամեն:

Ո՞վ Սուրբ Գևորգ զորավար, դու Սուրբ Հոգու զենքով զինավառ արիաբար ելար աշխարհավեր չարի դեմ և հերոսաբար հաղթեցիր անդնդի վիշապին, անդադար բարեխոսի՛ր մեզ համար Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն, որպեսզի անբեկանելի

հաղթենք անմարմին սատանային. ամեն:

Ո՞վ Սուրբ Միքայել հրեշտակապետ, երկնային զորքերի հզոր իշխան, աստվածային զորությամբ կործանի՛ր չար սատանային և խափանիր չարի կամակատարների ծրագրերը: Մեր ամենօրյա պայքարի մեջ պաշտպանիր մեզ. մարտնչի՛ր մեր կողքին, ազատի՛ր դևերի որոգայթներից և մեր կյաքնի վերջին պահին հափշտակի՛ր մեզ սատանայի ճիրաններից. ամեն:

Երկնավոր Թագավորի սուրբ զորապետ, Անմահի սիրով աշխարհին խաչված սուրբդ Սարգիս՝ պսակված Տիրոջ հաղթող խաչով, մեր անձերի փրկության համար եղիր բարեխոս մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի մոտ, ում վայել է փառք, իշխանություն և պատիվ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԻ ԱՄԵՆՕՐՅԱ ԱՂՈԹՔԸ

Աստվա՛ծ իմ, տո՛ւր ինձ հոգու խաղաղությամբ դիմավորել այն ամենը, ինչ որ կբերի այս օրը, և օգնի՛ր ինձ անմնացորդ հանձնվելու Քո սուրբ կամքին:

Օրվա յուրաքանչյուր ժամին և ամեն բանում խրատի՛ր և աջակցի՛ր ինձ:

Ինչպիսի լուրեր էլ որ ստանամ օրվա ընթացքում, սովորեցրո՛ւ ինձ ընդունել հանդարտ հոգով և այն անսասան հավատով, որ ամեն ինչում Քո Սուրբ կամքը կա:

Ղեկավարի՛ր իմ մտքերն ու զգացմունքները բոլոր իմ խոսքերում և գործերում:

Յուրաքանչյուր աննախադեպ պարագայում թույլ մի՛ տուր ինձ մոռանալ, որ այդ ամենը ի վերուստ է առաքված Քո կողմից:

Սովորեցրո՛ւ ինձ ամեն մարդու հետ խելամիտ ու շիտակ վարվել՝ չվշտացնելով և չվրդովվեցնելով և ոչ մեկին:

Տե՛ր, ինձ ուժ տո՛ւր կրելու այս առաջիկա օրվա հոգնությունները ու բոլոր դիպվածները:

Ղեկավարի՛ր իմ կամքը և սովորեցրո՛ւ ինձ աղոթել, հուսալ, հավատալ, սիրել, համբերել ու ներել. ամեն:

ՏԵՐ ՆԵՐՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՐԳԸ ԲԵՐԴԱՊԱՀ ՁԻՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գիշերը Քո անունը պիտի հիշենք, Տե՛ր:

Մեր սրտերը բարի խոսքեր պիտի բխեցնեն, և մեր լեզուները պիտի պատմեն երկնավոր Թագավորիդ գործերի մասին:

Արթնացե՛ք, լույսի որդինե՛ր, լույսի Հորն օրհնելու համար, ալելուիա:

Արթնացե՛ք, Արյամբ փրկվածնե՛ր, և փա՛ռք տվեք Փրկողին, ալելուիա:

Արթնացե՛ք, նոր ժողովո՛ւրդ, Նորոգողին նոր երգ ձոնելով, ալելուիա:

Արթնացե՛ք, և մի՛ ննջեք, հիմար կույսերի նման մի՛ նիրհեք, ալելուիա:

Արթնացե՛ք, երկրպագենք և արտասուքով այս ասենք, ալելուիա:

Արթնացի՛ր, ինչու՞ ես ննջում: Տե՛ր, մի՛ մերժիր մեզ մինչև վերջ:

Վե՛ր կաց, Տե՛ր, օգնի՛ր մեզ, Քո անունը կփառաբանենք:

Թող մարդասեր Տերը մեզ մխիթարություն և Եկեղեցուն սփոփանք շնորհի:

Ահով ու դողով աղոթքի կանգնենք:

Գանք մեր հանցանքները խոստովանենք:

Եվ Քրիստոսից քավության և մեծ ողորմության կարժանանանք:

Երկնքի զորքերի հետ միանալով՝ անբաժանելի ու համագո Երրորդությանդ փառք ենք մատուցում:

Փառք Քեզ, Սուրբ Աստված, անճառելի Հոր անեղ Որդի, որ ոչնչից գոյացրեցիր բոլոր արարածներին:

Տե՛ր, Եկեղեցու ժողովրդապետները հայցում են Քեզ՝ ասելով. «Բարի՛ Հովիվ, ողորմիր բանավոր հոտին»:

Ամեն, ալելուիա, ալելուիա, ալելուիա:

Ամեն, ալելուիա, ալելուիա, ալելուիա:

ՈՂՋՈՒՅՆ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ

-Քրիստոս ծնավ և հայտնեցավ:
-Օրհնյալ է Հայտնությունն Քրիստոսի:
(թարգմ. -Քրիստոս ծնվեց և հայտնվեց:
-Օրհնյալ է Քրիստոսի Հայտնությունը):

ՈՂՋՈՒՅՆ ՍՈՒՐԲ ՁԱՏԿԻ

-Քրիստոս հարյավ ի մեռելոց:
-Օրհնյալ է Հարությունն Քրիստոսի:
(թարգմ. -Քրիստոս հարություն առավ մահացածներից:
-Օրհնյալ է Քրստոսի Հարությունը):

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ ՈՂՋՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՀՐԱԺԵՇՏԻ ՁԵՎԵՐԸ

Կաթողիկոսին՝
«Աստված օգնական, Վեհափա՛ռ Տեր»
Արքեպիսկոպոսին, Եպիսկոպոսին՝
«Աստված օգնական Սրբազա՛ն Հայր»

Վարդապետին, Աբեղային՝

«Աստված օգնական, Հա՛յր Սուրբ»

Քահանային՝

«Օրհնեցե՛ք, Տե՛ր Հայր»

ԻՆՉՊԵՍ ԽԱՉԱԿՆՔՎԵԼ

Աղոթքից առաջ միացրո՛ւ աջ ձեռքիդ երեք մատները (բթամատ, ցուցամատ և միջնամատ), մյուս երկու մատները ծալած, հպի՛ր ճակատիդ՝ ասելով՝ «հանուն Հոր», իջեցրո՛ւ կրծքիդ ներքևը՝ ասելով՝ «և Որդվո», տա՛ր կրծքիդ ձախ կողմը՝ ասելով՝ «և Հոգվույն», ապա տար կրծքիդ աջ կողմը՝ ասելով «Սրբո» (թարգմ. հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու): Այնուհետև ձեռքիդ ափը դի՛ր կրծքիդ վրա ու ասա՝ «ամեն»:

Աղոթքի վերջում ասա. «Փա՛ռք Հորը և Որ-
դուն և Սուրբ Հոգուն. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

Աղոթագրքի շապիկի ետևի մասում պատկերված է Աշոտ Երկաթ թագավորի խաչը («Սուրբ Նշան») իր պահարանով, որի օգնությամբ հայոց զորքերը մի շարք հաղթանակներ են տարել արաբների դեմ: Մի անգամ, երբ թնամու զորքերը սառույցի վրայով մոտենում են կղզուն՝ ցանկանալով գրավել և թալանել եկեղեցու սրբություններն ու ողջ ունեցվածքը, Սևանի Սուրբ Առաքելոց վանքի վանահայրը Սուրբ խաչով դուրս է գալիս վանքից և աղոթում, որից հետո հալչում է սառույցը, և արաբական մեծաքանակ զորքերը խեղդվում են ջրում:

Աշոտ Երկաթ թագավորի խաչը երկաթե մեծ խաչ է, որի կենտրոնում՝ ապակու տակ, պահված է փրկչական Խաչի մի մասունք: Ավանդության համաձայն՝ «Սուրբ նշանը» պատրաստված է այն կոնքի կտորից, որի մեջ Մարիամ Աստվածածինը լողացրել է մանուկ Հիսուսին: Թադեոս առաքյալն այդ կոնքից երեք խաչ է պատրաստել, որոնցից մեկը պահվում էր Սևանի Սուրբ Առաքելոց վանքում: Այս սրբությունն այնքան մեծ

հրաշագործ հատկություն է ունեցել, որ նախկինում մեծ փորձությունների, համաճարակների, երաշտի, կարկտի և այլ առիթներով ժողովուրդը միշտ գալիս ու տանում էր «Սուրբ Նշանը»՝ հոգևորականի միջոցով օրհնության կարգ կատարելու համար:

Սրբագործ Խաչն այժմ պահվում է Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի թանգարանում: Հայոց հաղթական բանակի 20-րդ տարեդարձի առթիվ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակով սուրբ խաչը կհայտարարվի որպես Հայոց բանակի պահապան ու հովանավոր:

Սույն աղոթագրքի տպագրության ծախսերը հոգաց
ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղան հիմնադրամը, որին հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը

ԱՂՈԹԱԳԻՐՔԸ ՊԱՏՐԱՍՏԵՑԻՆ

ՀԱՄԼԵՏ ՍԱՐԿԱՎԱԳ ՄՈՎՍԵՍՅԱՆԸ ԵՎ

ՀՐԱՅՐ ՈՒՐԱՐԱԿԻՐ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ

Սուրբ Նշան (Աշոտ Երկաթ թագավորի խաչը)